ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք,

ք. Թումանյան 1-ի մաս, կենտ.փ շ.1, Հեռ. 098-04-80-46 ,

N 03-166
18 հոկտեմբեր 2013թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի, պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու 2013թ. հոկտեմբերի 17-ի թիվ 36-Ն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, 098-04-80-46,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2013թվականի N 36-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 69 հոդվածի 1-ին մասով և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով.

Ընդունել՝ ի գիտություն Թումանյան համայնքի 2013թ. բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՄՅԱՆ ՄԻՍԱՔ
2. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐԱՏ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՏՈՒՆ
6. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հավելված
Թումանյան համայնքի ավագանու
2013 թ. հոկտեմբերի 17 թիվ 36 - Ն որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 թ -ի ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2013թ –ի բյուջեն երրորդ եռամսյակում կատարվել է եկամուտների գծով՝ 100.2 %-ով, նախատեսված 22964.4 հազ.դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 23003.8 հազ. դրամ: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 3483.9 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 3557.5 հազ. դրամ, կատարման տոկոսը՝102.1 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 18959.0 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0 %, այդ թվում՝ համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝ 18959.0 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100%, պետական բյուջեից վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումները(սուբվենցիաներ) 521.5 հազ. դրամի դիմաց տրվել է 487.3 հազ. դրամ:

1. Բյուջեի վարչական մասի եկամուտները

2013թ-ի երրորդ եռամսյակի համար բյուջեի վարչական մասով նախատեսված էր 22964.4 հազ. դրամ եկամուտ, փաստացի մուտքերը կազմել են 23003.8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100.2 % : Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված էր 4082.9 հազ. դրամ, կատարվել է փաստացի մուտք 3557.5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 102.1 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 18959.0 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100%:

1) Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2013 թ-ի երրորդ եռամսյակի համար բյուջեով նախատեսված էր 769.7 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 850.4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 110.5 %: Նախորդ տարվա համեմատ հողի հարկի կատարման տոկոսը աճել է:

2) Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար նախատեսված էր 238.4 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 271.8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 114.0 %, իսկ փոխադրամիջոցների համար նախատեսված էր գույքահարկ 1000.0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 940.5 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը՝ 94.1 %, որը նախորդ տարվա համեմատ նույնպես աճել է :

3) Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները նախատեսված էր 326.0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 276.5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 84.8 %, որը նախորդ տարվա համեմատ նույնպես աճել է :

4) Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2013թ-ի երրորդ եռամսյակի համար բյուջեով նախատեսված էր 1149.8 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 1218.3 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 106.0 % :

5) Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ

Այս եկամտատեսակը նախատեսված էր 18959.0 հազ. դրամ, այն տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100 %,պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիա) նախատեսված էր 521.5 հազ. դրամ,տրվել է 487.3 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 93.4 % :

6) Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները

Բյուջեի ֆոնդային մասի եկամուտները 2013թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում կազմել է 59.9 հազ. դրամ:

2. Բյուջեի վարչական մասի ծախսերի կատարողականը

Բյուջեի վարչական մասի ծախսերը 2013թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում նախատեսված էր 22964.4 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսվել է 20716.6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 90.2 %:

1) Ըստ գործառնական դասակարգման ծախսերը կատարվել են

ա) Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների գծով ծախսերը 2013 թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում բյուջեով նախատեսված 14757.9 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 12615.6 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 87.3 %:

բ) Քաղաքացիական պաշտպանության համար նախատեսվել էր 15.0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախս չի կատարվել:

գ) Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 766.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 766.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 100.0 % :

դ) Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայության՝ այդ թվում փողոցների լուսավորության գծով ծախսերը նախատեսված 600.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 365.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 60.8 %:

ե) Այլ մշակույթային կազմակերպությունների գծով ծախսերը նախատեսված էր 45.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 10.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 22.2 % :

զ) Կրթության համար նախատեսված ծախսերը 6780. 5 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 6660.0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 98.2 %, այդ թվում նախադպրոցական կրթություն՝ 4265.6 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս կատարվել է 4260.0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝99.9 %,արտադպրոցական դաստիարակության համար նախատեսված է 2184.9 հազ. դրամ,որի համար փաստացի ծախսը կատարվել է 2070.0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 94.7 %, իսկ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների գծով ծախսերը նախատեսված էր 330.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել

է 330.0 հազ. դրամ, կատարման տակոսը՝ 100.0 % :

է) Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 300.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 300.0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 100.0%:

2).Ըստ տնտեսագիտական դասակարգման 2013 թ.-ի
երրորդ եռամսյակի ընթացքում բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել են

ա) Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ նախատեսված 11523.2 հազ. դրամի փոխարեն կատարվել է ծախս՝ 10699.3 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 92.9 %:

բ) Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման ծախսերը նախատեսված 3924.7 հազ. դրամի դիմաց կատարվել է փաստացի ծախս 3004.3 հազ.դրամ կամ կատարման տոկոսը՝ 77.3 %:

գ) Ընթացիկ դրամաշնորհները համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ նախատեսված էր 6968.5 հազ. դրամ,փաստացի կատարվել է 6660.0 հազ. դրամ ծախս կատարման տոկոսը՝ 95.6 %:

դ) Սոցիալական նպաստներ և կենսաթոշակների գծով ծախսերը նախատեսված էր 300.0 հազ. դրամ,փաստացի ծախս կատարվել է 300, 0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 100.0%:

ե) Այլ ծախսերը, այդ թվում պահուստային ֆոնդը նախատեսված էր 248.0 հազ. դրամ, սակայն փաստացի կատարվել է 53.0 հազ. դրամ ծախս, կատարման տոկոսը՝ 21.4 %:

3. Բյուջեի ֆոնդային մասի ծախսերը

Թումանյան համայնքի 2013թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում բյուջեի ֆոնդային մասով նախատեսված էր 534.6 հազ. դրամ ծախս, փաստացի ծախս կատարվել է 190, 0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 35.5 %:

Թումանյան համայնքի 2013թ.-ի երրորդ եռամսյակի ընթացքում բյուջեի կատարման բարձր ցուցանիշը պայմանավորված է համայնքի ղեկավարի և քաղաքապետարանի աշխատակազմի բարեխիղճ և հետևողական աշխատանքով:

Թումանյան համայնքի ղեկավար՝ /Լ. Զավարյան/
Կրտսեր պաշտոնների առաջին ենթախմբի
առաջատար մասնագետ - հաշվապահ՝ /Ա. Ամիրջանյան/